600.0158.16.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 մայիսի 2018 թվականի №158Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի №327Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի ապրիլի 20-ին «ՋԻԷՅՉ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 19-ի «ՋԻԷՅՉ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №327Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0612 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0612 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանի կառուցման և շահագործման գործարար ծրագրի համաձայն՝ մեկ տարի կառուցման ժամանակահատվածից 4 ամիսը նախատեսված էր նախագծային-նախահաշվային աշխատանքների և նախագծի փորձաքննությունների համար, իսկ հետագա 8 ամսում Ընկերությունը նախատեսում էր ավարտին հասցնել կայանի կառուցման աշխատանքները,

գ) Ընկերությունը 2018 թվականի մարտի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագիծը՝ դրական փորձագիտական եզրակացություններով, որի համաձայն փոփոխվել են

էլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշները, մասնավորապես, ԼԷ №0612 լիցենզիայի պայմաններով ամրագրված արևային վահանակների քանակը և հզորությունը, որի հետևանքով նաև տեղակայվող հզորությունը,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում կարգի №3 հավելվածը՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ութ ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0612 լիցենզիայով ամրագրված «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 19-ի «ՋԻԷՅՉ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №327Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի հուլիսի 19-ը» բառերը փոխարինելով «մինչև 2019 թվականի մարտի 19-ը» բառերով:
2. ԼԷ №0612 լիցենզիայի պայմանների՝
   1) 6-րդ կետում «999» թիվը փոխարինել «994.5» թվով,
   2) 7-րդ կետում «3700» թիվը փոխարինել «3060» թվով, իսկ «0.270» թիվը՝ «0.325» թվով:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0612 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Արտանիշ-2» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 26-ի №3711-02 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուներեք հազար հարյուր քսանհինգ դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար երկու հարյուր հիսուն դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2019 թվականի մայիսի 3-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հուլիսի 19-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
16 մայիսի 2018թ.